<<ԿԱՊԱՆ>> ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀՀ Սյունիքի մարզ, ք.Կապան, Ա.Մանուկյան 5Ա

08 հուլիսի 2024թ
N_4_

<<ՄԱՆՍԵՐԳՈ>> ՍՊԸ տնօրեն՝
Մանաս Կարապետյանին

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ա Գ Ի Ր

(«Կապան» Բարեգործական հիմնադրամի կարիքների համար կապալային աշխատանքների կատարման գնման N ԿԲՀ-ԳՀԱՇՁԲ-23/01 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին)

«Կապան» Բարեգործական Հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Մանսերգո» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 27.07.2023 թվականին կնքվել է հիմնադրամի կարիքների համար կապալային աշխատանքների կատարման գնման N ԿԲՀ-ԳՀԱՇՁԲ-23/01 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ *կապալառուն պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել նույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Կապան քաղաքի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու հարակից տարածքի բարեկարգման աշխատանքները իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:*

Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ *պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն օրացուցային գրաֆիկի:*

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն պատվիրատուն իրավունք ունի՝ *միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.*

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհապույց վերացման ողջամիտ ժամկետները.

Պայմանագրի 3.4.5 և 3.4.6 կետերի համաձայն կապալառուն պարտավոր է՝ *պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:*

Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

Պայմանագրի 6.1 կետի համաձայն՝ *կապալառուն պատասխանատվություն է կրում աշխատանքի որակի և նույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:*

«Կապան» Բարեգործական Հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Մանսերգո» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 11.01.2024 թվականին կնքվել է N ԿԲՀ-ԳՀԱՇՁԲ-23/01 ծածկագրով կնքված պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին թիվ 01 Համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր): Համաձայնագրով Պայմանագրի կատարման վերջնաժամկետ է սահմանվել՝ 10.02.2024 թվականը:

Հաշվի առնելով, որ «Մանսերգո» ՍՊ ընկերությունը խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, մասնավորապես՝ նրա կողմից Պայմանագրով նախատեսված աշխատանքները նախատեսված ժամկետում ամբողջությամբ չեն կատարվել և ավարտվել, հետևաբար Պատվիրատուն օգտվելով իր իրավունքից հայտնում է հետևյալի մասին.

«Կապան» Բարեգործական Հիմնադրամի և «Մանսերգո» ՍՊԸ-ի միջև 27.07.2023 թվականին կնքված հիմնադրամի կարիքների համար կապալային աշխատանքների կատարման գնման N ԿԲՀ-ԳՀԱՇՁԲ-23/01 պայմանագիրը 08▯07▯2024 թվականից միակողմանի լուծել և Կապալառուից պահանջել սեղմ ժամկետում հատուցել պատճառված վնասները, տույժերը և տուգանքները:

«Կապան» Բարեգործական Հիմնադրամը նաև նախաձեռնում է «Մանսերգո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:

<<Կապան>> Բարեգործական Հիմնադրամի
Գործադիր տնօրեն

Ա.Համբարձումյան